

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.04.2021թ. թիվ 2112545667 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 14 >> 05 2021թ. 7-13 7846

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արամ Ռաֆայելյանի թիվ ՄԴ/39498-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Բաղյան 1 նրբանցքի 4 շենքի 24 բնակարանի բնակիչ Արամ Ռաֆայելյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.04.2021թ. թիվ 2112545667 որոշումը՝ նշելով, որ տվյալ հատվածում կանգառ է կատարել ուղևոր նստելու նպատակով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զեպտեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 23.03.2021թ. ժամը 09⁰⁹-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Սարյան-Կ.Դեմիրճյան փողոցների խաչմերուկի հատվածում երկրորդ շարքով՝ 09:09:05 վայրկյանից մինչև 09:10:06 վայրկյանը, որի տևողությունն է 61 վայրկյան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով**

Երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վրանգ չի ստեղծվել:

Տեսանյութը փաստում է, որ կանգառը թեև կատարվել է ուղևոր նստելու նպատակով, սակայն գերազանցել է մեկ րոպեն, իսկ «Նորմատիվ ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական փույթ նշանակելու մասին 12.04.2021թ. թիվ 2112545667 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արամ Ռաֆայելյանին:



Ե. Կարապետյան